

Ավետիք Իսահակյան

Կովկասի հայոց հրատարակչական ընկերությանը, 1913թ . , հուլիսի 11, Կոլոնժ

Հարգելի պարոններ.
Շնորհակալությամբ ստացել եմ «Պանի» հոնորարը լրիվ, սակայն գոնե մի նամակ չգրեցիք թարգմանության մասին:
Գրել էի նույնպես, որ նոր թարգմանական գործեր հանձնարարեք ինձ թարգմանելու. դրան էլ չպատասխանեցիք. չգիտեմ, ի՞նչ անեմ, որ հարկ համարեք պատասխանելու: Անշուշտ կարող էիք մի երկու տող գրել:
Ուրիշ բան չեմ կարող ենթադրել, - միայն ծուլություն:
Սրանով առաջարկում եմ հարգելի ընկերությանդ հետևյալը. Բյուրգերի՝ «Բարոն Մյանխհաուզենի արկածները», գերմաներենից. համաշխարհային հռչակ ունի, իբրև հանճարեղ գործ փոքրերի և մեծերի համար, կլինի մոտ 200 երես:
Անդերսենի հեքիաթները ամբողջ գերմաներենից, նույն¬պես կլինի մոտ 6 - 700 երես:
Սերվանտեսի. «Դոն Քիշոտ Լամանշեցի» ֆրանսերենից, մոտ 8 – 900 երես:
Այս երեք գործերն էլ մշտական արժեք կունենան հայ գրականության մեջ, Հ. Հ. Ընկերությանը, խոսք չկա, որ պատիվ կբերեն:
Եթե սրանցից մեկնումեկի վրա գոնե առայժմ համաձայնություն կարողանաք կայացնել, խնդրում եմ, ինձ անմիջապես հայտնեք, որ ձեռնարկեմ գործին:
Պայմանների մասին էլ, հարկավ, կգրեք, սակայն այդ երկրորդականն է:
Եթե վերջին երկուսը կախված է նյութական, համեմա¬տաբար մեծ գումարի հետ, առաջինը, «Մյունխհաուզենը», ընկերության սովորական գրքերի շարքիցն է:

Յատուկ Պոէմ

Հարգանքներով և բարևներով,
Ձեր՝ Ավետիք Իսահակյան

Յատուկ Պոէմ